ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» Հունվարի 2015թ. N 6-ա (Գ)

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (կոդ՝ 30-3.1-141) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 22-ի եզրակացությունը և Վ. Հարությունյանի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Վահան Ալֆրեդի Հարությունյանին 2015 թվականի հունվարի 22-ից՝ երեք ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (կոդ՝ 30-3.1-141) պաշտոնում՝ լուծելով ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 30-3.1-141) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2014 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 26 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ